ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 05

Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի արտահերթ նիստի

ք. Երևան 13 մայիսի 2021թ.

Ղեկավարվելով ՀՀ Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի Կառավարման խորհրդի (այսուհետ՝ Կառավարման խորհուրդ) նախագահի 2021 թվականի մայիսի 10-ի N 13-Լ որոշմամբ և հիմք ընդունելով Կառավարման խորհրդի 2021 թվականի ապրիլի 2-ի թիվ 05-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 7-րդ կետի 2-րդ ենթակետը, կայացել է Կառավարման խորհրդի արտահերթ նիստ:

Համաձայն Կառավարման խորհրդի 2021 թվականի ապրիլի 2-ի N 05-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 21-րդ կետի՝ Կառավարման խորհրդի նիստերն իրավազոր են, եթե այդ նիստերին մասնակցում է խորհրդի անդամների 2/3-ից ավելին:

Մասնակցում են՝

Ռոմանոս Պետրոսյան	ՀՀ շրջակա միջավայրի նախարար (խորհրդի նախագահ)
Վաչե Տերտերյան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ
Արթուր Ասոյան	ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար
Արման Պողոսյան	ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Ավագ Ավանեսյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Գևորգ Բալումյան	Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի ընդերքաբանության և շրջակա միջավայրի պահպանության ամբիոնի դոցենտ, տեխնիկական գիտությունների թեկնածու
Պերճ Խաչատրյան	Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն
Բացակայում են՝	
Մարատ Գրիգորյան	Հայաստանի պետական համալսարանի աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի դեկան
Վահե Դանիելյան	ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ

ՕՐԱԿԱՐԳ

Հարց

1. Հայաստանի Հանրապետության վարչապետին ներկայացնելու նպատակով Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարի տեղակալների պաշտոններում Մուշեղ Մեսրոպյանի և Վաղարշակ Ամիրխանյանի թեկնածությանը հավանություն տալու վերաբերյալ:

2. Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի հաստիքացուցակում փոփոխություն կատարելուն հավանություն տալու վերաբերյալ:

3. Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերին հավանություն տալու վերաբերյալ:

Կառավարման խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հայաստանի Հանրապետության վարչապետին ներկայացնելու նպատակով Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարի տեղակալների պաշտոններում Մուշեղ Մեսրոպյանի և Վաղարշակ Ամիրխանյանի թեկնածությանը հավանություն տալու վերաբերյալ:

Հարց հանվել է օրակարգից

2. Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի հաստիքացուցակում փոփոխություն կատարելուն հավանություն տալու վերաբերյալ:

Կողմ-7

3. Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերին հավանություն տալու վերաբերյալ:

Կողմ-6, Դեմ-1

Կառավարման խորհրդի դիտարկումները.

Կառավարման խորհրդի նիստի մեկնարկից հետո մինչև օրակարգով նախատեսված հարցերի քննարկումը, ելնելով նախորդ նիստում խորհրդի անդամների միջև պայմանավորվածությունից՝ Կառավարման խորհրդի նախագահի առաջարկությամբ ՀՀ Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի(այսուհետ՝ Տեսչական մարմին) ղեկավարը ներկայացրեց իր կողմից պաշտոնավարման ժամանակաշրջանում կատարած

աշխատանքները անդրադառնալով կատարված ստուգումներին և Արաքս գետի ավազի արդյունահանման խնդիրներին:

Վերոգրյալ զեկույցից հետո Տեսչական մարմնի ղեկավարը Կառավարման խորհրդին ներկայացրեց օրակարգի 1-ին և 2-րդ հարցերի վերաբերյալ հիմնավորումները, ինչից հետո Կառավարման խորհրդի անդամները ներկայացրեցին հետևյալ դիտարկումները.

ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարը առաջարկեց՝ Տեսչական մարմնի հաստիքացուցակում փոփոխություն կատարելուց և պաշտոնների անձնագրերը հաստատելուց հետո, ելնելով տեսչական մարմնի ոլորտային առանձնահատկություններից, քննարկել կառուցվածքային փոփոխությունը՝ օրինակ Տեսչական մարմնի Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչությունում բաժնի պետերի հաստիքները կրճատել և ավելացնել Վարչության տեղակալի հաստիք, ինչպես նաև նշեց, որ Տեսչական մարմնի կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթ իրականացնող խորհրդականներից մեկի վրա կարելի է դնել միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության հետ կապված գործառույթը, որպեսզի չծանրաբեռնել Տեսչական մարմնի այլ ստորաբաժանումներին:

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի ընդերքաբանության և շրջակա միջավայրի պահպանության ամբիոնի դոցենտ, տեխնիկական գիտությունների թեկնածու Գևորգ Բալումյանը նշեց, որ Տեսչական մարմնի պաշտոնի անձնագրերում անհրաժեշտ է ներառել նեղ մասնագիտական կրթության պահանջ, ինչպես նաև ղեկավար պաշտոնների համար սահմանել առնվազն մագիստրոսի աստիճան, հիմավորելով, որ այն կնպաստի Տեսչական մարմնի արդյունավետությանը, և կբարձրացնի ստուգումների որակը:

Տեսչական մարմնի ղեկավարը, կիսելով Գևորգ Բալումյանի մտահոգությունը, արձանագրեց, որ ներկա իրականությունում հնարավոր չէ պաշտոնի անձնագրերում սահմանել նեղ մասնագիտական կրթություն՝ նշելով մի շարք պատճառներ.

- Տեսչական մարմնին առնչվող ոլորտներին համապատասխան նեղ մասնագետների պակաս կա,
- Նեղ մասնագիտական կրթություն սահմանելու դեպքում, համաձայն «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ Օրենքի և այլ՝ ոլորտը կարգավորող օրենսդրությունների, պաաշտոնների դասակարգումից հետո Տեսչական մարմնի շատ փորձառու աշխատակիցներ իրավասու չեն լինի պաշտոնավարել:

ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար՝ Արթուր Ասոյանն առաջարկեց, որպես միջանկյալ լուծում՝պաշտոնի նշանակվելու մրցույթը անցած թեկնածուներից Տեսչական մարմնի ղեկավարը ընտրի նեղ մասնագիտություն ունեցող թեկնածուին:

Գևորգ Բալումյանի դիտարկմանը՝ ղեկավար պաշտոնների համար սահմանել առնվազն մագիստրոսի աստիճան, Տեսչական մարմնի ղեկավարը նշեց, որ այդ իրավահարաբերությունը հիմնականում կարգավորվում է «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ Օրենքի դրույթներով, դա հնարավոր կլինի իրականացնել միայն օրենքի փոփոխության արդյունքում: Սույն հարցի վերաբերյալ ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար՝ Արթուր Ասոյանն առաջարկեց հանձնարարել Տեսչական մարմնի իրավաբանական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչությանը գտնել հարցը կարգավորող իրավական լուծում:

Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ Կառավարման խորհրդի անդամները միաձայն որոշեցին հարցը հանել օրակարգից և քննարկման դնել հաջորդ Կառավարման խորհրդի նիստին, այդ որոշումը պայմանավորված էր այն հանգամանքով, որ Խորհրդի անդամները կարողանան առաջարկել Տեսչական մարմնի ղեկավարին՝ Կառավարման խորհրդին ներկայացնել տեսչական մարմնի ղեկավարի տեղակալների այլ թեկնածուներ:

Քվեարկությամբ որոշումներն ընդունվել են ձայների պարզ մեծամասնությամբ:

ՀՀ շրջակա միջավայրի նախարար (խորհրդի նախագահ)_____ Ռ. Պետրոսյան

ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի
իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության
վարչության պետ (խորհրդի քարտուղար) _____ Հ. Բարսեղյան